«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
չորեքշաբթի, 14 մայիսի 2025թ., 14:05

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
10 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Հրահատ Արզումանյան
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ
Ռուբեն Ինջիկյան

Արտեմ Կոնստանդյան

Բանկի Վարչություն
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Գուրգեն Ղուկասյան
Դավիթ Պետրոսյան
Վաղինակ Ստեփանյան
Արթուր Ապերյան
Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ
ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ Լիլիթ Օվսյան և Տիգրան Հարությունյան
«ՖԻՆԱՐՄ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյան
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 21.04.2025թ. դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական

կայքէջում և azdarar.am կայքում, հրապարակվել է «Ժողովուրդ» օրաթերթում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են / տրամադրվել են բաժնետերերին 22.04.2025թ-ին:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 14.05.2025թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 14.05.2025թ-ին:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 181,254,472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 173,141,925 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 95,52%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանը** ողջունեց մասնակիցներին, բացեց նիստը և խոսքը փոխանցեց Վարչության նախագահի առաջին տեղակալ Արարատ Ղուկասյանին՝ ներկայացնելու օրակարգի հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հարց 1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունում փոփոխությունների հաստատում:

Արարատ Ղուկասյանը ներկայացրեց, որ Բանկի զարգացման ռազմավարության շրջանակներում առաջադրված խնդիրների իրագործման նպատակով՝ Բանկի Խորհրդի կողմից որոշում էր կայացվել իրականացնել թվով 10,000,000 հատ սովորական բաժնետոմսի լրացուցիչ թողարկում՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով և 390 ՀՀ դրամ տեղաբաշխման արժեքով, բաց բաժանորդագրության միջոցով:
Հրապարակային առաջարկը մեկնարկել էր 03.02.2025թ-ին և ավարտվել 07.04.2025թ-ին՝ ողջ առաջարկված ծավալի հաջող տեղաբաշխմամբ:

Արարատ Ղուկասյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի արժեթղթերի նկատմամբ պահանջարկը, ինչպես նաև ներդրումային նախագծերի իրականացման ռազմավարական հեռանկարները, Խորհրդի կողմից որոշում էր կայացվել Բանկի Կանոնադրությամբ նախատեսել Բանկի իրավունքը տեղաբաշխելու հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 390 ՀՀ դրամ անվանական արժեքով, սահմանել քանակը՝ սահմանված ծավալի շրջանակներում հետագա թողարկումներ իրականացնելու հնարավորություն ապահովելու նպատակով:

Արարատ Ղուկասյանը նշեց, որ կանոնադրական կապիտալը համալրելու և նոր դասի բաժնետոմսեր սահմանելու կապակցությամբ անհրաժեշտ է հաստատել Կանոնադրությունը նոր խմբագրությամբ, և խոսքը փոխանցեց Ժողովի քարտուղարին՝ ներկայացնելու քվեարկության արդյունքները:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 1-ին հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 172,949,925 ձայն, կամ մասնակիցների ձայների 99,9%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 192,000 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով, բաժնետերերի ժողովը <u>որոշում կայացրեց</u> հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրությունում փոփոխությունները, համաձայն կից հավելվածի, և ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման:

Հարց 2. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի կազմի և լիազորությունների ժամկետի հաստատում:

Արարատ Ղուկասյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետի ավարտը, Բանկի Խորհուրդը որոշում է կայացրել Ընդհանուր ժողովի

հաստատմանը ներկայացնել Հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝ լիազորությունների երեք տարի ժամկետով. Աննա Բադոյան (նախագահ), Նուրիջան Կիրակոսյան, Հայկ Նալբանդյան:

Ժողովի քարտուղարը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները՝ ըստ օրակարգի 2-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 173,141,925 ձայն, կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով, բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց հաստատել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝ լիազորությունների ժամկետը սահմանելով երեք տարի. Աննա Բադոյան (նախագահ), Նուրիջան Կիրակոսյան, Հայկ Նալբանդյան:

Հաշվի առնելով Ընդհանուր ժողովի քվեարկության գործընթացում Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերի ոչ բավարար ներգրավվածությունը՝ Ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանն** անհրաժեշտ համարեց ակտիվացնել բաժնետերերի հետ համակարգային փոխգործակցությունը, այդ թվում՝ Բանկի գործունեության նշանակալի իրադարձությունների և նորությունների վերաբերյալ պարբերական ներդրումային դայջեսթների ուղարկման միջոցով, գործող բաժնետերերի հետ վստահելի հարաբերությունները ամրապնդելու նպատակով, ինչը կարող է նպաստել նոր ներդրողների ներգրավմանը:

Աննա Բադոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են, դիմեց ներկաներին հարցեր տալու առաջարկով: Հարցեր չհնչեցին:

Ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանը** շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և ավարտեց բաժնետերերի ժողովը ժամը 14:20:

_____	_____
Գագիկ Զաքարյան	**Աննա Բադոյան**
Նախագահ	**Քարտուղար**

Երևան, 14 մայիսի 2025թ.